

թեամբ ի քրիստոնեութան¹ կարգի վախճանել, քան թե փառախնդիր յածմամբ պատահել ուրացութեան եւ կորնչել: ¹³ Լաւ համարէին ըստ բանի Գրոյն զնախատինս վասն Քրիստոսի, քան առ ժամանակ մի թաթաւել ընդ սնոտի փառս աշխարհիս, եւ յաւիտենից տանջանացն լինել ժառանգ². որք իբրեւ զԲաբելոնի հնոցին բոց տեսանէին բարձրացեալ զամբարշտութեանն կիզումն, եւ ոչ ոք էր որ շիջուցանէր: ¹⁴ Ժողովեալք նստէին առ սուրբ քահանայապետին Հայոց Գիւտայ³, որ ոչ երբեք լռէր յարտասուելոյ զմոխրասիրացն զմոլորութիւնս, որ ինդրէր ⁴լռելեայն պաճարանս հայթայթանաց հանդերձ նոքաւք. երբեմն փախչել յաւտարութիւն, եւ երբեմն ի խնդիր լինել աւզնականութեան եւ ապստամբել: ¹⁵ Առաքէին գաղտ եւ պատգամաւորս միանգամ եւ երկիցս առ թագաւորն Յունաց Լեւոն. որոյ թեպէտ եւ յանձն առեալ կամեր աւզնել՝ յերկարեր ժամն եւ խափանէին խորհեալքն:

ԿԴ. Սկսանէր այնուհետեւ սուրբ կաթողիկոսն Հայոց Գիւտ առ ի չժուժալ սրտին՝ յայտնապէս ռիսութեամբ գրգռել ընդ անաւրէն ուրացելոցն, եւ սիրել եւ պատուել զկողմն տառապեալ հաւատացելոցն: ² Եւ մանաւանդ առ վատթարս ունէր եւ արհամարհէր զՄախազն Գաղիշոյ, որ զաւրագլուխն եւ քաջալերիչն էր ամենայն ամբարշտելոցն դասու: ³ Որոյ չկարացեալ տանել արհամարհանաց սրբոյ կաթողիկոսին Հայոց Գիւտայ՝ զաւղեալ բիւր բանս թշնամութեան՝ ամբաստան լինէր զնմանէ առ թագաւորն Պարսից Պերոզ, ասելով, եթե «Չմարդիկ, որ զկամաց քոց զիրաման կամին կատարել եւ զքո արեւնս խորհին⁵ յանձն առնուլ եւ սիրել՝ կոչէ առ ինքն, եւ է որ ինչ տալով, եւ է զորս քաղցր բանիւք պատրէ, եւ յիրացն ի բաց դարձուցանէ: ⁴ Վասն զի բազումք եկեալ են առ իս եւ յանձն առեալ ունել զարեւնս քո. եւ նորա կոչեալ առ ինքն՝ պատրանաւք ի բաց տուեալ է թողուլ զիրսն եւ արհամարհել. այլ եւ զմեզ, որ զքեզ սիրեմք եւ արեգական եւ կրակի երկիր պագանեմք եւ կամաց քոց ծառայեմք՝ ատեայ եւ թշնամանէ: ⁵ Եւ ինքն ընդ կայսեր խաւսի եւ պատուական ընծայիւք հպատակէ նմա եւ մեծամեծացն որ ի դրան նորա են»: ⁶ Եւ այլ բազում բանիւք ըստ արինի թշնամոյ խաւսէր ըստ կամի:

⁷ Եւ լուեալ զայսպիսի բանս ամբաստանութեան թագաւորին Պարսից Պերոզի ի Մախազէն Գաղիշոյէ՝ զայրացեալ սրտմտութեամբ հրաման տայր՝ սրբոյ կաթողիկոսին Հայոց ի դուռն հասանել եւ անդ պատասխանի առնել բանից դատախազին: ⁸ Իսկ երանելի կաթողիկոսն Հայոց Գիւտ կամաւ եւ յաւժարութեամբ ի դուռն երթայր եւ յանդիման լինէր աւագաց դրանն: ⁹ Ո-

1 Ձ. *քնագրում*՝ ի քրիստոնեական. *լուսանցքում ուղղած այսպէս*. ՏՏ. ի քրիստոնեական

2 ՏՏ. լինել արժանաւոր

3 ՏՏ. Գիւտեայ. Ձ. *նախ*՝ գիւտեայ, *յետոյ*՝ եւ-ն *քերած*

4 Ձ. *լռելեան*... հայթայթանաց

5 ՏՏ. *խորհել*